



ՑՈՒՑՍՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ

Գազի առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցումը կատարում է մատակարարը՝ հաշվարկային ժամանակաշրջանի վերջին օրը, պարտադիր զննելով առևտրային հաշվառքի սարքի արտաքին վիճակը և կապարակնիքների ամբողջականությունը: Բաժանորդն իրավունք ունի մասնակցել ցուցմունքի գրանցմանը:

Հաշվարկային ժամանակաշրջանը օրացուցային ամիսն է:

Հաշվարկային ժամանակաշրջանում մատակարարված գազը հաշվառվում է ըստ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի:

Հաշվարկային ժամանակաշրջանում մատակարարված գազի համար մատակարարը բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ:

Բաժանորդը վճարումը կատարում է վճարման փաստաթղթում նշված ներկայացման ամսաթվին հաջորդող 7 օրվա ընթացքում:

Հաշվառքի սարքի խախտումների կամ միտումնավոր խախտումների, կամ գազը հաշվառքի սարքի շրջանցմամբ օգտագործելու դեպքում մատակարարված գազի քանակը հաշվարկվում է սահմանված կարգով, վերահաշվարկված գազի քանակի համար վճարումները կատարվում են հետևյալ կերպ.



ստուգաչափման արդյունքում գազի վերահաշվարկված քանակի համար վճարման (ավելի վճարված գումարի վերադարձման) ժամկետը որոշում են մատակարարը և բաժանորդը՝ փոխհամաձայնությամբ.



ոչ բաժանորդի մեղքով հաշվառքի խախտման դեպքում մատակարարված գազի վերահաշվարկված քանակի համար պետք է վճարվի վճարման փաստաթուղթը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում.



բաժանորդի մեղքով հաշվառքի խախտման, հաշվառքի սարքի շրջանցմամբ գազի սպառման դեպքերում գազի վերահաշվարկված քանակի համար բաժանորդը պետք է վճարի վճարման փաստաթուղթը ներկայացնելուց հետո 7 օրվա ընթացքում: